

Հարգելի տիկին Արգարյան.

Ի պատասխան Ձեր **09.11.2018**թ. հ. **01/07** գրության՝ տեղեկացվում է.

Երևան քաղաքի Մոսկովյան և Սարյան փողոցներում կայանատեղերի ապօրինի զավթման հետևանքով (մեքենաների կայանման վայր հանդիսացող՝ կարմիր գծով գծանշված գոտիներում ինքնաշեն արգելանշաններ կամ առարկաներ տեղադրելը) տուգանված իրավաբանական անձանց ցանկը հնարավոր չէ տրամադրել, քանի որ Երևանի քաղաքապետարանին նշված իրավախախտումների մասով լիազորություններ վերապահված չեն: «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենսգրքի **219**¹-րդ հոդվածի համաձայն՝ տարածքային կառավարման մարմինները քննում են սույն օրենսգրքի **48**-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ իրենց տնօրինության տակ գտնվող հողերի մասով, ինչպես նաև սույն օրենսգրքի **43.1**-րդ հոդվածի **1**-ին, **9**-րդ մասերով, **152.1**-ին հոդվածի **4**-րդ մասով և **54.5**-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումների վերաբերյալ գործերը: Տեղական ինքնակառավարման մարմինները քննում են սույն օրենսգրքի **43.1**-ին հոդվածի **2-8**-րդ և **10-12**-րդ մասերով, **48**-րդ հոդվածով՝ իրենց տնօրինության տակ գտնվող հողերի մասով, **113**-րդ, **124.7**-րդ հոդվածներով, **152.1**-րդ հոդվածի **1**-ին, **2**-րդ, **3**-րդ մասերով, **152.2**-րդ հոդվածի **1**-ին մասով, **156**-րդ հոդվածով, **157**-րդ հոդվածի **2**-րդ մասով, **157.15**-րդ, **158**-րդ (բացառությամբ՝ **2**-րդ, **3**-րդ, **12**-րդ, **17**-րդ, **19**-րդ, **21**-րդ, **23**-րդ, **26**-րդ, **27**-րդ մասերի), **162**-րդ, **169.16**-րդ հոդվածներով, **169.14**-րդ հոդվածի **4**-րդ մասով, **189.11**-րդ և **189.12**-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը: Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց իրավասության սահմաններում քննում են նաև սույն օրենսգրքի **114**-րդ, **154**-րդ, **154.1**-րդ հոդվածներով, **156.1**-րդ հոդվածի **1**-ին մասով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ մասնավոր գերեզմանատների մասով, **2**-րդ, **4**-րդ, **5**-րդ, **7**-րդ, **8**-րդ, **9**-րդ, **10**-րդ մասերով, **169.1**-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը: Տարածքային կառավարման մարմինների անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունեն մարզպետները, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների անունից՝ համայնքի ղեկավարները, իսկ Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետը կամ նրա որոշմամբ սահմանված պաշտոնատար անձինք:

Հարցը հստակ կանոնակարգված է «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենսգրքի **224**-րդ հոդվածով և Երևանի քաղաքապետարանին նշված իրավախախտումների մասով տեսչական մարմնի լիազորություններ վերապահված չեն:

Ինչ վերաբերում է Մոսկովյան փողոցի **հ.28** հասցեի շենքի **հ.170** տարածքին հարակից ճանապարհահատվածում գործող ծառայողական ավտոակայանատեղին, ապա այն կազմակերպվել է «Զեթ Էյ Ինվեստ» ՍՊԸ-ի կողմից՝ Երևան քաղաքի ավագանու **26.12.2017**թ. հ.**101**-Ա որոշմամբ ընկերությանը տրված իրավունքի հիմքով: Նշված ավտոկայանատեղում կազմակերպիչն իրավասու է արգելելու այլ տրանսպորտային միջոցների կայանման իրավունքը, ինչը նաև, գործող օրենսդրության պահանջներին համապատասխան նշված է կայանատեղի պարտադիր կահավորանքի տարրերից մեկի՝ տեղեկատվական ցուցանակի վրա: